ԳՐԱԿԱՆ

ՍԱՐԳԻՍ ՄԽԻԹԱՐԵԱՆ

Բանասիրական Գիտութիւնների Դոկտոր, Երեւանի Պետական Համալսարանի Հայ բանասիրութեան ֆակուլտետի՝ ակադ. Հրանդ Թամրազեանի անուան Հայ գրականութեան պատմութեան ամբիոն

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՎԵՐԱԾՆՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ ՎԱՀԱՆ ՏԷՐԵԱՆԻ «ՄԻ՛ ԽԱՌՆԷՔ ՄԵԶ ՁԵՐ ՎԱՅՐԻ ԱՐՋԻ ՅԵՂԵՐԻՆ» ԲԱՆԱՍՏԵԾՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Բանալի բառեր. *Բանաստեղծութիւն, Երկիր Նաիրի, թռչուն, լեռ, հայրենիք, հոգեւոր Հայաստան, փիւնիկ։*

Key words: *Poetry, Land of Nairi, bird, mount, fatherland, spiritual Armenia, phoenix.*

Պարտադիր չէ դիւանագէտ լինել չխառնուելու համար ***Եւրոպայի պատասխանատուութեանը.... Զլսուած եսասիրութեամբ նա թողել է այնտեղ մորթելու մի ողջ ժողովուրդ,*** *որը բացարձակապէս իրաւունք է ունեցել յուսադրուել խօսքերով....*

Ժան Ժորես *(1896 թ. կոտորածների մասին)*

....Պէտք են համաշխարհային աղետներ, ***պէտք են թուրքական անսահման սրածութեան զարհուրանքներ կամ մի ողջ ժողովրդի վայրենի հալածանքներ,*** *որպէսզի մենք նոր միայն ուշադրութիւն դարձնենք (այդ ամէնի վրայ-Ս.Մ.)....*

Վ. Բրիւսով *(1915 թ. կոտորածների մասին)*

Մեր ժողովրդի սարսափելի ոչնչացման մասին արդէն բացայայտ խօսում էին դեռեւս 1895-1896 թթ. ***առաջին գենոցիդի*** *օրերից աւելի վաղ, և 1915 թ. բնաւ նորութիւն չէր արեւմտահայութեան կեանքում։ Այդ ամէնում իր մեծագոյն մեղքի բաժինն ունէին եւրոպական դիւանագիտութիւնն ու քաղաքական շրջանակները՝ հակառակ նրա, որ որոշ եւրոպացի ազնիւ պետական և առաւելապէս քաղաքական ու մշակութային գործիչներ բացայայտօրէն քննադատում էին իրենց պետութիւններին[1] այս ամէնի համար։ Սակայն իրականում այդ անկաշառ մարդկանց խօսքը յաճախ ոչ մի արժէք չունէր ծախու պետական պաշտօնեաների ու դիւանագէտների համար։ Նոյն ցաւալի իրողութեանը մենք ականատես ենք լինում նաեւ 21-րդ դարում, երբ այդ պետութիւնների քաղաքական գործիչները մոռացութեան են տալիս Ատրպէյճանի գործած*

[1] Տե՛ս **Պողոսեան Ստ.,** Հայոց ցեղասպանութեան պատմութիւն, հ. 1, Ե., ԵՊՀ հր., 2008, էջ 6-12։

Սումգայիթի, Բաքուի և Գանձակի արիւնալի ոճրագործութիւնները, կոծկում այդ երկրի ազգայնամոլ շրջանակների ջանքերով կրթական համակարգում ահագնացող խայտառակ հակահայ դաստիարակութիւնը։

Մեր ժողովուրդի լինել-չլինելու, հոգեվարքի և յոյսի ծանրագոյն պահերին՝ 1916թ., Վ. Տէրեանին յաջողւում է ամբողջացնել «Երկիր Նաիրի» հայրենասիրական բանաստեղծութիւնների շարքը[2]։ Մինչ այդ սիմվոլիստական նորագոյն բանաստեղծութեան մէջ մեծագոյն յաջողութիւնների հասած արուեստագէտը ***իր շուրթերը դեռ չէր պղծել անէծքով*** *(Յովհ. Թումանեան) ու իր խոհերը նուիրել էր համամարդկային ազնիւ յոյզերի արտայայտմանը։ Բայց հարկադրուած էր ինքը եւս ձեռքն առնել տառապագին ոգորումների ծովում հայոց գեղարուեստական միտքը ջլատող հայրենաշունչ քնարը։ Խ. Աբովեանի, Ղ. Ալիշանի, Ռ. Պատկանեանի և այլոց տաղանդն արդէն պարպուել էր հայրենիքի ցաւերը երգելու վրայ։ «Ազգի վիճակը ծանրացաւ սրտիս»[3],-այսպիսին է նալպանտեանական բանաձեւումը, որ տխուր ժառանգութիւն էր մնացել նոր սերնդին։*

Վ. Տէրեանի հայրենասիրական շարքը բացւում է «Որպէս Լաերտի որդին» խորհրդանշական ստեղծագործութեամբ, որով աւարտւում է նրա խաղաղ ***որոնումթափառումների շրջանը,*** *և սկսւում՝* ***դարձի պահը*** *դէպի հայրենական յոյզի ու մտքի տխուր հովիտ։ Այսպէս.*

Որպէս Լաերտի որդին, որպէս
Ոլիս մի՝ թողած և հող, և տուն,
Անցած ծովեր ու ցամաքներ ես՝
Ամէն տեղ օտար և անխնդում։
Ու յոգնած քայլերով ահա կրկին
Վերադառնում եմ հայրենի հող,
Դէպի քարերդ ազնիւ ու հին
Եւ խրճիթներդ՝ ահով նիրհող[4]։

1913-1916 թթ. գրուած գլուխգործոցներից են «Մի՞թէ վեջին պոետն եմ ես», «Բարակիրան Նաիրուհին ինձ ժպտաց», «Ձեմ դաւաճանի իմ Նուարդին» ու այլ բանաստեղծութիւններ, և շարքը (թուով 16 երկ) ամբողջանում-աւարտւում է հայրենասիրական ուժգին մի պոռթկումով՝ «Մի՛ խառնէք մեզ ձեր վայրի արջի ցեղերին» ստեղծագործութեամբ[5]։ Մի բանաստեղծութիւն, որ իմաստային խոր շերտեր ունի, բարդ է ու բազմապլան։ Փորձութիւններով լի անցեալը և դառը ներկան հակադրուած են, ինչպէս որ հակադրուած են անհայրենիք վայրի ցեղերը և հայրենիքի զաւակները։ Շեշտելով իր երկրի սրբազան լինելը՝ բանաստեղծը նախ յաւերժպսակ լեռան խորհրդաբանական ներկայութիւնն է ապահովում երկում։ Անշարժ է ժամանակը, բայց մի ինչ-որ պահից թելերն արձակւում են, և սկսւում է նրա անկասելի ընթացքը դէպի առաջ՝ նոր ժամանակների տիրոյթը, որի շնորհիւ սկսում է պտըտուել պատմութեան անիւը և կենդանացնել կեանքը։ Այսպէս.

---

[2] Տե՛ս **Տէրեան Վ.,** Երկերի ժողովածու, հ. 1, Ե., Հայաստան հր., 1972, էջ 350։ Վ. Պարտիզունին նշում է, որ գաղափարը բանաստեղծի մտքում յղացել է 1913 թուականից։

[3] **Նալպանտեան Մ.,** Երկեր, Ե., Սովետական գրող հր., 1985, էջ 36։

[4] **Տէրեան Վ.,** Ընտիրը, Ե., ՀԳՄ հր., 2012, էջ 279։

[5] Տէրեան Վ., Երկերի ժողովածու, հ. 1, էջ 239։ Այս բնական բնագրից դուրս է թողնուել շարքի «Մի՛ խառնէք մեզ ձեր վայրի արջի ցեղերին» բանաստեղծութիւնը /Այսուհետեւ էջը կը նշուի բանաստեղծութեան կողքին/։ Սկզբում հեղինակն ընտրել է դրանցից 14-ը, իսկ ակադեմիկոս Էդ. Ջրբաշեանն իրաւացիօրէն շարքի մէջ վերականգնում է եւս չորսը, որոնք ժամանակին Պ. Մակինցեանը դրած է եղել իր կազմած շարքում։ Դրանք են՝ «Արարատին», «Թողի երկիրն իմ հայրենի», «Երկիր Նաիրի, երազ հեռաւոր» և «Մի՛ խառնէք մեզ ձեր վայրի արջի ցեղերին»։ Տե՛ս **Ջրբաշեան Էդ.,** Ձորս գագաթ, Ե., Սովետական գրող, 1982, էջ 266-267։

Բաբելոնն է եղել մեր ախոյեանը տեմ,

Անհետ կորել, անցել է- չար մշուշի պէս:

Ասորիքն է եղել մեր թշնամին ահա,

Դաշտ է տեղը և չկայ քար քարի վրայ: /297/

Բաբելոնն *ու* ***Ասորիքն*** *այն հանգրուան-խորհրդանիշերն են, որոնցից սկսում են առաջասահ գործողութիւնները։ Անհետացել են ախոյեանները, դաշտացել են երբեմնի հզօր պետութիւնների ծաղկուն տարածքները, բայց մնացել է Նաիրին։ Մնացել ենք մենք մեր ամրակուռ ոգով ու բզկտուած մարմնով։ Երբեմնի հզօր երկիրն արքայական ժողովրդի բնօրրանի խորհրդանիշն է, որ գետնահար է արուած։ Նախկինում վեհ ու հզօր՝ նա պատմութեան մէջ մնացել է իբրեւ անպարտելի տերութիւն՝ ընդդէմ իր ախոյեանների։ Չկան նրանք, բայց կայ նաիրական ժողովուրդը, հետեւաբար և երկիրը, որ մաքառում է կործանումի ու ոչնչացման դէմ, մերժում ու ի չիք է դարձնում մահը՝ փրկելու համար իր մարմնի բզկտուած ծուէնները։ Նաիրական աշխարի անկումն արդիւնք է սարսափելի մի ողբերգութեան, որ սանձազերծուել է 1915 թուականին թուրքական արիւնարբու պետութեան կողմից՝ պատմութեան էջից ջնջելու* ***հայ*** *անունը, լուծելու* ***հայկական հարցը*** *թուրքական եղանակով։*

Գրականագիտութիւնը փաստում է, որ 10-ական թուականներին բանաստեղծն անհատական ցաւի թեմայից անցնում է ազգային միայնութեան և ողբերգութեան թեմային[6]։ Համազգային վշտի զգացողութիւնը նրան յուզել է նախքան «Մթնշաղի անուրջները» /1908 թ./։ 1902-1906 թթ. Լազարեան ճեմարանի ուսանողութեան տարիներին բանաստեղծը բարձի տակ է պահել Ռաֆֆու «Կայծերը»[7], մշտապէս յիշել իր սերնդի առջեւ ծառացած սուրբ առաքելութիւնը հայրենիքի հանդէպ.

Եւ երդւում էինք սրտով հրահրուն

Մեր անբախտ երկրին մեր բախտը զոհել....[8]

Ճեմարանականներն իրենց խինդ ու թախծի մէջ այդ վեհ զգացմունքներով են ապրել, ու բանաստեղծը պատանութեան սքանչելի տարիները մեծ կարօտով է յիշում։

*Արդէն Առաջին աշխարհամարտի սկզբում Վ. Տէրեանը յանգում է նախ հոգեւոր, ապա նաեւ ֆիզիքական Հայաստանի նոր վերակերտման գաղափարին։ Դա այն է, ինչ Պատմահայր Խորենացին մատուցում է Սահակ Բագրատունուն՝ գրելով. «****Դու պատկանում ես նախնական ու քաջ ազգի՝ արդիւնաւոր ոչ միայն խօսքի և պիտանի խոհականութեան մէջ, այլեւ (յայտնի-Ս. Մ.) մեծամեծ փառաւոր գործերով»[9]։*** *Պէտք էր նախ վերակերտել անշքացող սրբազան հայրենիքի գաղափարը և յետոյ նաեւ պահպանել կամ կեանքի կոչել այն ֆիզիքական առումով։ Դա բոլորից լաւ իրագործել էր մեծ Պատմահայրը[10]։ Տէրեանն իր միտքը ձեւակերպում է այսպէս. «Հայութեան հաւաքում» կամ «Հայութեան կազմակերպում» գաղափարական իմաստով.* ***ահա ինչ եմ հասկանում ես «հոգեւոր Հայաստան» ասելով»[11]։*** *Հետաքրքիր խորհրդածութիւններ ենք նկատում, որոնք վերաբերում են բանաստեղծի վաղ շրջանի աշխարհայացքային*

---

[6] Տե՛ս **Թամրազեան Հ. Ս.,** Վահան Տէրեան, Ե., Սովետական գրող, 1985, էջ 101-102. նաեւ՝ Հայ նոր գրականութեան պատմութիւն (Վահան Տէրեան բաժինը գրել է **Ս. Սարինեանը**), հ. 5, Ե., ՀՍՍՀ ԳԱ հր., 1979, էջ 430-435:

[7] Տե՛ս **Պարտիզունի Վ.,** Վահան Տէրեան, Ե., Հայաստան, 1968, էջ 209:

[8] **Տէրեան Վ.,** Երկեր, հ. 2, Ե., Հայպետհրատ, 1961, էջ 168:

[9] **Խորենացի Մ.,** Պատմութիւն հայոց, Ե., 1968, էջ 68:

[10] **Արեւշատեան Ս., Միրումեան Կ.,** Հայոց փիլիսոփայութեան պատմութիւն (հին շրջան և վաղ միջնադար), Ե., Լուսաբաց հր., 2007, էջ 257-274:

[11] **Տէրեան Վ.,** Երկեր, հ. 2, էջ 314:

*իւրայատկութիւններին։ «**Կասեմ միայն**,-գրում է Տէրեանը իր վատ տրամադրութեան ու համընդհանուր թախծի մասին,- **որ պատճառների արմատը այն ներքին հակասութիւնների ու կասկածների մէջ է, որոնք վերջին տարիներիս մաշում են հոգիս։ Իմ միտքն զբաղեցնող հարցերը հազուադէպ են պատասխան գտնում**»[12]։ Կեանքի աններդաշնակութիւնը, մարդկային հոգու անզօրութիւնն այդ անկումի դէմ պոետին գցում են յուսահատութեան մէջ։ Ս. Սարինեանը գրում է. «Կայ մի նուրբ անցում «Գիշեր և յուշերից» դէպի «Ոսկի հեքիաթ», տխրութեան ֆիզիքական ցաւից դէպի մի ուրիշ աշխարհ, ուր հոգին «միաձուլւում է տիեզերական ներդաշնակութեան հետ», ուր այնկողմնայինն ու երկրայինը ձուլւում են յաւերժականի մէջ, և **գոյութեան ու անգոյի ստուերները հիւսում են յաւիտենական նորոգութեան հեքիաթը**»[13]։ Այսպիսով, Տէրեանի հոգեմտաւոր աշխարհի **յաւիտենական նորոգութեան** հարցը մնում է գերակայ նաեւ հայրենասիրութեան հարցերում։ Ցաւալի է այն, որ հայրենիքը դեռեւս չվերաշինուած, պետականութեան գլխաւոր բաղադրատարրերը չվերականգնած՝ այն կորչում է ֆիզիքական առումով, անէանում, դառնում եաթաղանի զոհ, կրակի ճարակ։ Ուստի տագնապի հետ միասին հնչում է ճիչ-պահանջը «Մի՛ խառնէք մեզ ձեր վայրի արջի ցեղերին»՝ տէրեանական պատկերացմամբ՝ զատորոշելով **այլոց**, որ «վայրի արջի ցեղեր»-ն են՝ աւերող և արիւնարբու, ու **մեզ՝ իր իրայիններին**, որ հզօր արքաների սերունդն ենք՝ առաքինի և ազնիւ։ Այսինքն՝*

1. Անհայրենիք բիրտ նուաճողներ՝ <u>օտարներ կամ թշնամական այլութիւն և</u>

2. Վաղնջական հայրենիքում գերուած ու այնժամ հայրենազրկուող ժողովուրդ կամ՝ <u>մենք։</u>

Հակադրութիւնը երկու աշխարհների միջեւ է՝ իրական-ֆիզիքական և հոգեւոր-գաղափարական իմաստներով։

*Բանաստեղծական պատկերում ֆիզիքական իմաստով կենդանի գծեր ստացած հայրենիքի կողքին ժամանակային տիրոյթը ձեռք է բերում տարածականութեան յատկանիշ՝ պատմութեան միջով անցնող դժուարին ճանապարհի տեսապատկերով։ Կարծես վաղնջական անէից գալիս և յառնում-առարկայանում է հայրենիքը՝ իր բոլոր ատրիբուտներով՝ ֆիզիքական և հոգեւոր։ Մնում է քննել՝ ինչո՞ւ է ժամանակն այդպէս ընդհատուել-վթարուել, և ինչո՞ւ է իր հայացքը ցաւագնօրէն այդ տիրոյթին յառել վշտաբեկ քնարական հերոսը։ Չնայած անցած մեր ճանապարհը ձիւնով, սառնամանիքով և աղէտներով է լի, բայց մեր ասպետական ոգին ընտելացած է արհաւիրքներին, ուստի բնաւ «**նոր չէ մեզ համար դաւ ու դառնութիւն**»[14]։ Հազար ձիւն տեսած լեռանը, նրա զաւակներին խորթ չեն նոր դաւն ու դառնութիւնը։ Դա մեր առաւելութիւնը չէ, այլ ցաւալի ճակատագիրը։*

*Տէրեանի ստեղծագործութեան մէջ օգտագործւում են խորհրդանիշեր, որոնք կապուած են մարդկութեան նախասկզբի հետ՝ սկսած նախաջրհեղեղեան ժամանակներից և աւարտած աստուածաշնչեան լեռով ու հովիտով։ Այդ պահով բացւում է մի նոր էջ մարդկութեան կեանքում, երբ սերունդները ցրւում են ու բնակւում անմարդաբնակ ու վայրի աշխարհում՝ այն դարձնելով բնակելի։ Լեռը հէնց ժամանակային առումով բաժանում է սահմանը կործանուած առաջին մարդկութեան և սկսուող նոր գոյաւորումի։ Լեռնահովտից տարածւում է յետ-ջրհեղեղեան մարդկութեան նոր կեանքը։ **Եւ այն այստեղ այլեւս երբեք չի աւարտուի իր նոր սկիզբով կեանքն իմաստաւորած ժողովուրդի համար,** որքան էլ մեծ լինեն դաւով ու դառնութեամբ լի մահացու սպառնալիքները։ Իսկ այս վերջին ամենաարիւնալի ու ամենացաւալի էջը բանաստեղծի վհատութիւնը հասցնում է իր գագաթնակէտին։ Ահա՛, տարակուսանքի, վարանման ու զարմանալի խոստովանութիւն.*

---

[12] Հայ նոր գրականութեան պատմութիւն (Վահան Տէրեան բաժինը գրել է **Ս. Սարինեանը**), հ. 5, էջ 429։

[13] Նոյն տեղում, էջ 430-431։

[14] **Տէրեան Վ.,** Ընտիրը, էջ 297։

Ահով ահա կանչում եմ քեզ՝

Յոլա՛, ցնորք Նաիրի՛.-

Միթէ վերջին պոետն եմ ես,

Վերջին երգիչն իմ երկրի[15]:

Մարդկայնօրէն կարելի է հասկանալ վշտահար պոետին։ Խզուած է կապը երկնքի ու երկրի միջեւ։ Ագահութիւնից կուրացած, բանականութեան ու խղճի վերջին նշոյլը կորցրած անամօթ ու բիրտ ամբոխից ի՞նչ կարելի է պահանջել։ Աւելի շատ կարելի է ենթադրել, որ քնարական հերոսի համար այստեղ հնչում է հռետորական հարցումը, քան թէ նոյնաբովանդակ հարցը։

Պատմութեան ճանապարհի մեր ուղեկիցների մեծ մասը չկան, բայց մենք այս «նորի» հետ նոր ժամանակներում քայլում ենք դէպի մահուան անապատները։ Դեռ ամէն ինչ չէ, որ ասուած և ամէն ինչ չէ, որ աւարտուած է։ Հարցն ունի անքննելի մի խորհուրդ։ Գայլային բարքով իր արիւնալի ճանապարհն անցած այս միջինասիական մորեխապարսն ի՞նչ ասպետականութեան մասին կարող է խօսել կամ խորհել։ Իր էութեամբ, սակայն, անպարտելի է առեղծուածային նաիրական ոգին։ Մեր ախոյանների դէմ մենք կանգնել ենք ասպետօրէն հպարտ, կանգնել ենք ազնիւ կեցուածքով՝ խաղաղութեան դէպքում խաղաղութիւն պարգեւելով, պատերազմի դէպքում՝ պատերազմելով, բայց նենգութիւնն ու դաւը մի կողմ վանած.

Ժամ է, եկ նորից, իմ ծիրանավառ,

Զրահաւորուի՛ր խանդով խնդագին,

Վառի՛ր երկունքի գիշերում խաւար

Հրով մկրտուած նաիրեան հոգին....[16]

Նաիրական արքաների պէս իր քնարական հերոսը մատնացոյց է անում անցեալը, դէպի անշքացած երբեմնի չար քաղաքներն ու երկրները, որ սեւ մշուշի հետ անհետացել են, ու քարը քարի վրայ չի մնացել։ Դրանով նա յիշեցնում է մեր թշնամուն սպասուող անողոք ճակատագիրը։ Այդ մենք չենք նենգել, քշել որեւէ ժողովրդի իր տնից ու հայրենիքից։ Եկողները եկել-բախուել, սպառնացել են, և իրենք էլ՝ անհետացել։ Նրանց կործանման պատճառը մենք չենք։ Արեւելեան անապատներից յայտնուածները՝ չարահնար ու վայրենաբարոյ սելճուկեան ամբոխներն են, որ հայրենիք են նուաճում սկզբում ոչ իրենց, այլ նախ և առաջ իրենց անասունների համար։ Այդ նրանք են աշխարհի ծաղկուն երկրներն ու շէն քաղաքները գետնահար արել, իսկ փլատակները դարձրել իրենց ձիերի համար արօտավայրեր։ Երբեմնի հռչակաւոր տաճարների ու սրբավայրերի ճանապարհները լքուել են ու ամայացել, իսկ շրջակայքում սկսել են իշխել աւազակները՝ գայլային իրենց ախորժակով ու գորշ գոյնով։ Դու վայրենու ճանապարհը չես կարող փակել, թիկունքից հարուածող սուրը և կացինը բռնել։ Նրան խորթ է ամբողջ մարդկայինը, ինչը նա խորապէս ատել գիտի և չի էլ քօղարկում։ Ծանր է բանաստեղծի եզրայանգումը, բայց ոչ յուսահատական.

Ամրակուռ է մեր հոգին-դարերի զաւակ՝

Շատ է տեսել մեր սիրտը աւեր ու կրակ։ /297/

Ցաւ ու արհաւիրք տեսած երկիրը ժամանակին բարեկարգ է եղել ու երջանիկ։ Այստեղ նախկինում հնչել են սիրոյ ու սրտի, ուրախութեան ու խնճոյքի կենսահաստատ երգեր ու մեղեդիներ։ Փանդիռները ձեռքներին շրջել են ժիր գուսանները,

---

[15] Նոյն տեղում, էջ 289։

[16] Նոյն տեղում, էջ 291։

դերասան-դերասանուհիներն իրենց զուարճախաղերն են ցուցադրել քաղաքների հրապարակներում։ Իսկ արհաւիրքների մէջ ամէն ինչ այլ է, և բանաստեղծական պատկերում աւելանում են հակադրութեան նոր եզրեր և նոր երանգներ՝ ***լաց է այստեղ ամէն երգ ու ողբ՝ ամէն գիրք:*** *Եւ չի կարող չհնչել խօսքը հզօր երկրի մասին.*

Հայրենիքում իմ արևաներկ

Գիշերն իջաւ անլոյս ու լուռ.

Այնտեղ, ուր կար այնքան սիրերգ

Եւ վարդի բոյր, և սրտի հուր: /282/

Կոտորածը դաւադիր թշնամու չարակամութեան արդիւնք է։ Դա նենգութիւն է, որ սահման չի ճանաչում, բռնութիւն, որ վերածուել է սպանդի։ Այդ տեսարանները որոշ իմաստով եթէ զուսպ են յիշեալ շարքում, ապա արեւմտահայ քերթողների դէպքում դրանք ուղղակի սահմռկեցնող են։ Ահա՛ 1896 թ. կոտորածի սարսափներով լի Դ. Վարուժանի «Ջարդը» բանաստեղծութիւնը.

Եւ ես ահա կը նշմարիմ՝ որ անոնք

Որջերէն դուրս ազատ ճամբուն վրայ կրոստնուն:

Միսի գրգռիչ ախորժակէն կանչրուած

Կը հաւաքուին ոհմակ-ոհմակ, ոռնաձայն.

Իրենց գըլխուն ասպղերն ամբողջ կը դեղնին.

Եւ կակաչներն հազարաւոր բլուրներու

Սարսափահար բաժակներնին կը փակեն:

Արիւնի քաղցն ու հին փափաքն աւերման

Թեւերն անոնց կը սոթրէ,

Թեւերն անոնց կը զինէ...[17]

Կործանման բնազդով շարժուող այս վայրենի մարդագայլերի կոյտը կործանման մէջ է որոնում իր բնազդային հաճոյքը։ Նա չի գիտակցում, որ ոչ ոք իրեն միւսներին կեանքից զրկելու իրաւունք չի տուել։ Ոհմակը զինւում է՝ հալածելու հայորդիներին, որոնք իրենց «Ըղեղներին մէջ կըզգան/Սոյլերը տաք գնդակին»։ Տէրեանական պատկերը մէկ այլ երանգ ունի, քան վարուժանական արիւնալի ու հոգեցունց տեսարանները։ Թէեւ այն եւս լի է սրտակեղեք ցաւով ու տագնապով, բայց որոշակիօրէն զուսպ է, օտարին անհասկանալի, ուր բանաստեղծը խօսում է աւերուած հայրենիքի մասին[18]*.*

Ո՛չ քարերը դարաւոր,

Ո՛չ գրերն աւեր-

Չեն պատմի քեզ վիշտը խոր

Եւ երկունքը մեր.

.... Եւ խնճոյքում հրով հին,

Երբ կարմիր խնդայ,-

---

[17] **Վարուժան Դ.,** Երկեր, Ե., Սովետական գրող հր., 1984, էջ 118-119:

[18] Сборникь Армянской литературы (под редакцкцей М. Горкого), Петогеадь, Из. Парусь, 1915, с. CII.

Չես զգայ, որ մեր գինին-

Մեր արիւնն է դա.... /287/:

Դարաւոր քարերը, «աւեր գրերն» անկարող են անհաղորդ հոգուն մեր վիշտն ու երկունքը տեղ հասցնելու։ Ծիսական խնճոյքի կրակի կարմիրը եւս չի յուզի օտարին, և նա չի հասկանայ, թէ մեր արիւնն ու գինին խառնուած են, և դրանք զատելն անհնար է։ Թերեւս գինեխառն արիւնը սովորական մի բան է հայերիս համար այն ցաւալի օրուանից սկսած, երբ, ըստ Փաւստոս պատմիչի, խնճոյքի սեղանին բիւզանդացի զինուորը սուր է քաշում Պապ թագաւորի վրայ, և նրա գաւաթի գինին և սեփական արիւնը իրար են խառնւում։ Ու դարեր ահա մեր կեանքը դառնացած է այդ արիւնախառն գինով։

Ի տարբերութիւն մեր հնագոյն հակառակորդների՝ նորայայտ ոսոխը մորթել գիտի ծերերի, կանանց, մանկանց։ Կտրիճներին զօրակոչել է իր աւազակաբարոյ բանակը, որպէսզի սրանք կռուեն իր թշնամու դէմ, բայց յետոյ տմարդօրէն ձերբակալում է կամ անսպասելի գնդակահարում թիկունքից, դաւադրօրէն ոչնչացնում մեկուսի։ Նա դէմ դիմաց կռուելու ցանկութիւն չունի ու աւազակ է ամէն ինչում։ Բնաւ ոչ պատահականօրէն նենգ թշնամին զինուորների և ոստիկանների փոխարէն սպանդի ժամանակ օգտագործում էր քրդական ոյժերը, բանտերից արձակուած քրէականների և ենիչերիների աւազակախմբեր[19], չէ՞ որ հասարակ թուրք զինուորն անգամ դեռ կարող էր գթութիւն ունենալ։ Դիպուկ է տէրեանական խօսքը.

Գերուած ենք մենք - ո՛չ ստրուկ, գերուած մի արծիւ,

Զարութեան դէմ վեհսիրտ միշտ, վատի դէմ ազնիւ,

Բարբարոսներ շատ կը գան ու կ՚անցնեն անհետ,

Արքայական խօսքը մեր կը մնայ յաւետ: /297/

Բանաստեղծը չի կասկածում, որ կ՚անցնի այս բարբարոսը եւս։ Կ՚անցնի, թէեւ աւազակն իր բնոյթը չի փոխի, նա միայն իր զգեստները կարող է փոխել, որպէսզի արեան հետքերը կորցնի և որպէսզի քաղաքակիրթ երեւայ ու թօզ փչի մադկանց աչքերին[20]։ Արիւնով տիրելով մեր տանը՝ նուաճողը նաեւ չի երջանկացել։ Նրա համար անհասկանալի է արքայական խօսքը, նուիրական յիշատակները, մինչդեռ սրբազան է այստեղ ամէն ինչ.

Չի հասկանայ ձեր հոգին և՛ ծոյլ, և՛ օտար,

Տաճար է մեր երկիրը՝ սուրբ է ամէն քար: /297/

Սրբութիւն չճանաչողները չեն կարող գիտակցել սրբութեան և ազնուութեան արժէքը։ Միանգամայն արդարացի է Տէրեանը՝ «արքայական խօսքը մեր կը մնայ յաւէտ» *բանաձեւումի մէջ։ Աւազակը երբեք ասպետական խօսքն ու պահուածքը չի կարող գնահատել, նա միայն գողի հոգեբանութեամբ պիտի ապրի։ Իսկ Տէրեանի հերոսը վերահառնումի և արթնացման կոչ է հնչեցնում իր հայրենասիրական ստեղծագործութիւնների շարքում.*

Կանգնի՛ր, անկեալ ժողովուրդ,

Եւ հաւատայ, և՛ տոկայ.

Կայ քո վշտում վեհ խորհուրդ,

Եւ խաչուածին մահ չկայ /294/:

---

[19] **Պողոսեան Ստ.,** Հայոց ցեղասպանութեան պատմութիւն, հ. 1, էջ 7-13:

[20] Նոյն տեղում:

Շարքի՝ Արարատին ձօնուած երգում բանաստեղծն այն համոզմունքն է յայտնում, որ հայրենիքը վերածնուելու է հակառակ թշնամու եղեռնածին բաղձանքների և ամենակործան գործելակերպի[21]։ Մեր առասպելական հերոսից՝ Արայից մինչեւ քրիստոնէական ներկան վերածնութեան խորհրդով մաքառել ենք, և այս աշխարհակործան արհաւիրքն անգամ ի զօրու չէ՝ փակելու մեր գալիքի ճամբան։

Պատահական չէ եգիպտական երկրի յիշատակումը։ Ճիշդ է՝ Բուրգերի երկիրը ընկաւ, բայց և յառնեց հազարամեակների մէջ իր մեծ ու շքեղ, ազնիւ ու աննենգ ձեռքբերումներով՝ յաւերժութեան համար թողնելով անմահ մշակութային կոթողներով [22].

Իմաստուն պոետներ/ը/

....Չեն կառուցել պղնձէ բուրգեր,

ոչ էլ բրոնզէ դամբարաններ....

Նրանց բուրգերը գրքերն են խրատների,

Նրանց երեխան գրիչն է եղեգնեայ[23]։

Մտքի ու բազկի ներդաշնակութիւնն է թագաւորել այստեղ, և Նեղոսի հովտից բացի մտքի բուրգեր են յառնել նաեւ Արարատեան աշխարհում։ Նաիրեան արքաների սուրբ երկիրը, որ խեղդուել է արեան մէջ, միեւնոյն է, հակառակ չարագործի բոլոր ճիգերի, կը յառնի մոխիրներից։ Սքանչելի փիւնիկ թռչունը՝ կարմրափետուր հրաշահաւքը, ընդունակ է մահուանից վերածնուել։ Այդպիսին են մահը բացառող ժողովուրդները նաեւ, որ մահը յաղթում են և անէից կրկին հառնում։ Այդ դէպքում ինչպէս սուրբ նահատակներին, այնպէս էլ նրանց տրւում է ***վերածնուելու հնարը.***

Եգիպտական բուրգերը փոշի կը դառնան,

Արեւի պէս, երկի՛ր իմ, կը վառուես վառման /298/։

Ինգեան ուսմունքում հոգու վերաբերեալ կայ նկատում այն մասին, որ Հոգին կեանքի այն սրբազան թաքնութիւնն է, որ ինչպէս ամէն մի «օրգանիզմ» տիրապետում է ինքն իր վրայ ինքնայատուկ «կառուցուածքով և ձեւով»։ Նա կարող է ինքն իրեն վերածնել[24] (նշւում է Հոգու վերածնութեան հինգ եղանակ)[25]։

«Երկիր Նաիրի»-ում անցեալի խնդիրը որոշակիօրէն պարզ է, այդ դէպքում ծանրագոյնը ապագայի հարցն է։ Գաղափարական Նաիրիից պէտք է յառնի իրականը[26]։ Պոետը դա տեսնում է իր տեսիլների աշխարհում։ Բնաւորութեամբ ներհուն, յաճախ խուսափուկ ու քաշուող բանաստեղծի էութիւնն անհատական դրամայի առումով կարծես հարցն իր համար լուծել է[27]։ Նուարդ Թումանեանին գրած նամակներից մէկը (1914 թ. վերջ) մի սրտառուչ ու ցնցող դրամայի արտայայտութիւն է. «Ասելիք շատ կայ... բայց գրելու հաւաս ու հալ չկայ։ Մի կողմ թողած ***իմ անձնական կեանքը,*** *որ շատ է տխուր ու սրտամաշ,* ***մեր իրականութեան մէջ կատարուող իրերն էլ ինձ չեն ուրախացնում, աւելին կասեմ, յոյս էլ չեն ներշնչում, որ ապագան աւելի ուրախալի կը լինի,****- գրում է բանաստեղծը.... Սիմվոլիստական իր միայնութեանը, մեկուսացմանը կամ հոգեկան դրամային գալիս է միանալու իրական դրաման, որը դառնում է բա-*

---

[21] **Պարտիզունի Վ.,** Վահան Տէրեանի հետ, Ե., Հայաստան, 1989, էջ 212-216։

[22] Հին Արեւելքի պոեզիա, Ե., 1982, էջ 494-501։

[23] Նոյն տեղում, էջ 19։

[24] Տե՛ս **Юнг К. Г.,** Душа и миф, Мн., Хорвест, 2004, с. 239.

[25] Տե՛ս Նոյն տեղում, էջ 246-250։

[26] Տե՛ս **Սարինեան Ս.,** Հայ նոր գրականութեան պատմութիւն, հ. 5, Ե., ՀՍՍՀ ԳԱ, 1979, էջ 459-460։

[27] Տե՛ս **Գասպարեան Կ.,** Վահան Տէրեանի գրական դպրոցը խորհրդապաշտութեան գեղագիտութեան համակարգում, Ե., 2005, էջ 8։

*նաստեղծի անձնական խոր ցաւը։ Նա այնուհետեւ գրում է,- վերջ ի վերջոյ ես սկսում եմ գալ այն եզրակացութեան, որ **մեր հայրենիքի ցաւը** մեզ այնպէս է մաշում, ջլատում, կեղեքում, որ մենք դառնում ենք անընդունակ ուրիշ բան հասկանալու կամ անելու։ **Դա մի հիւանդագին սէր է, դա մի անյաղթելի մոլութիւն է- դրա պրիզմայով է բացւում մեր առջեւ աշխարհը- այդ չափով ենք մօտենում մենք ամէն ինչի և գուցէ դրա համար մենք անզօր ենք դառնում ու մեռնում ենք վաղ.... Այդպէս ենք մենք բոլորս-կոտրուած, գետնահար խոտի նման ընկած, պարտուած, անյոյս ու անհաւատ»[28]։***

*Անձնական տառապագին վիճակին յաջորդում է ազգային ծանր ու անդարմանելի դրաման, ինչը մի նոր անձնական ցաւի է վերածւում։ Մի՞թէ սա Մ. Նալպանտեանի «Մանկութեան օրեր» բանաստեղծութեան քնարական հերոսի հոգեվիճակի կրկնութիւնը չէ։ Իր խորքում բանաստեղծն ունենում է երկու կարգի տանջագին զգացողութիւն՝ **1/իր անձի ու 2/իր հայրենիքի։** Այդ առթիւ նա ասում է, թէ «ես անզօր եմ այդ կրակի դէմ և անօգնական։ Եւ երբեմն մտածում եմ, որ դա ունի իր խորին ու վսեմ իմաստը։ Չէ՞ որ այդպէս, իմ հոգու նման, այրւում է և իմ երկիրը, «իմ Նաիրին»-գուցէ դրա համար է այրում իմ հոգին, որովհետեւ իմ հոգու մէջ **«Նաիրեան չքնաղ հոգին»** է այրւում։ **Եւ ես սկսում եմ զգալ ինձ կոչուած մէկը նրանցից, որոնց վիճակուել է «Նաիրեան» հոգու բարձր տառապանքը կրել իրանց հոգու մէջ - գուցէ դրա համար հարկաւոր է, որ մենք, այդպիսիներս, սքեմ հագնենք ու լռակեաց կեանք վարենք օրհներգութիւններ յօրինելով կրօնական և կրօնական սրբազան խորհուրդներ կատարելով** (таинства свершать) **նաիրեան հոգու առջեւ...»[29]։***

Այստեղ Տէրեանն ամբողջովին սիմվոլիստական գեղագիտութեան տիրոյթում է։ Նա իրեն զգում է այն մարգարէների պէս, որոնց մասին խօսում է Ա. Ռեմբոն[30]։ Տէրեանի դէպքում այնկողմնային աշխարհի հետ կապն ուղեկցւում է սրբազան ծէսով։ Համաշխարհային արուեստի գաղափարական ճգնաժամի, անելանելիութեան ու վտանգուած ապագայի անյուսալիութեան պայմաններում[31] նա վստահում է իր ինտուիցիային, ինչը միակ ճիշդ լուծումը կարող է լինել[32]։ Նաիրին իր հոգու աշխարհի մասն է, ու բանաստեղծն իր հոգուց պիտի երկնի ֆիզիքապէս մեռնող, բայց իր ներսում դեռեւս կենդանի երկիրը։ Այդ սրբազան ծէսով, այս դէպքում նաեւ անարիւն զոհաբերութեամբ, որ դարձել է նաեւ արիւնալի, մարգարէ-բանաստեղծն ի վիճակի է վերածնելու երկիրը Նաիրի, որը, ցաւօք, իրականում մեռնում է դանդաղօրէն[33]։ Իր «Վահագն»-ում Ե. Չարենցը առասպելազերծում է հերոսին և իրերը տեսնում իրականութեան մէջ։ Տէրեանն առասպելոյթի գաղափարական խորքում է կատարում իր որոնումները՝ չբացառելով իրականութիւնը ու չկտրուելով նրանից։ Նա, սակայն, իր ներքին էներգիայով ուզում է վերածնել Նաիրին և կանխել նրա մահը, ինչպէս եգիպտական քուրմ[34]։ Նա համոզուած է, որ փրկութիւնը գերերկրային ոյժերի շնորհիւ ինքը կ'իրականացնի։ Դրա համար բանաստեղծութեան վերջին տողերում ոչ միայն ակնարկում է եգիպտական քուրմերին նմանուող իր անձի մասին, այլեւ անմահութեան ծէսը կատարելու իր պատրաստակամութիւնը և իր մարգարէական դերակատարութիւնը դրանում է տեսնում։ Այստեղ նա խօսում է և իր կեանքի զոհաբերութեան մասին։

Միանգամայն տեղին է յիշել Կ. Չարեանի «Նաւը լեռան վրայ» վէպի հերոսի մտածումները Սեւանի ու հայրենիքի մասին. «Նա /Արա Հերեանը-Ս. Մ./ զգում էր, որ

---

[28] **Տէրեան Վ.,** Երկերի ժողովածու, հ. 3, Ե., Հայպետհրատ, 1963, էջ 359-360։

[29] Նոյն տեղում, էջ 360։ Նաեւ՝ **Էդոյեան Հ.,** Բառերի սահմանից այն կողմ, Մեռեալների գիրքը, Ե., 2004, էջ 14-20։

[30] **Ռեմբո Ա.,** Բանաստեղծութիւններ, Ե., Ապոլոն հր., 1991, էջ 143-150։

[31] **Месхи Г.,** Кризис европейской культуры на рубеже 19-20 столетиий, Համատեքստ, Ե., 2002, էջ 75-76։

[32] **Юнг К. Г.,** Дух в человеке, искусстве и литературе, Минск, Харвест, 2003, с. 155.

[33] **Աղաբաբեան Ս.,** Հայ սովետական գրականութեան պատմութիւն, հ. 1, Ե., ՀՍՍՀ ԳԱ հր., 1986, էջ 7-9, 14-15։

[34] **Էդոյեան Հ.,** Բառերի սահմանից այն կողմ, Մեռեալների գիրքը, Ե., Վան Արեան, 2004, էջ 13-14։

....այս ժայռերի լռությունը, այս ջրերի ծփուն հանգստությունը, այս երկնքի անշարժ խորությունը միայն երեւութական էին։ Այստեղ՝ ներսը ուժասպառ ծալուած ալիքների մէջ, ամէն տեղ ծածկուած էին անիմանալի զօրութիւններ։ Նրանց ներկայութիւնը նա զգում էր իր ամբողջ էութեամբ։ Զօրութիւններ։ «Ընդունել նրանց,-մտածեց նա,- նշանակում է չափուել նրանց հետ։ Մարդկային ոյժը կարո՞ղ էր դրանց հասնել...»[35]։ Հրաշալի են ձեւակերպումները և միանգամայն դիպուկ։ Այո՛, մարդկային ոյժը կարող է, ի զորու է տիրապետել դրանց վրայ։

Յուսահատութիւնը թէեւ ծնւում է իրականութեան ողբերգական ակունքներից, անորոշութեան զգացողութիւնից ու քաոտիկ վիճակից, սակայն Տէրեանը կատարում է «կրօնական սրբազան խորհուրդ» իր երազած Նաիրիի առջեւ։ Նա իր ինտուիցիայով կռահում է, որ այս մահը խորհրդանշական է[36], և դա կարող է փոխուել վերածնութեան, ինչպէս հնագոյն միստերիաներում[37]։ Այստեղից է ծագում նրա յուսահատութիւնից ծնուած յուսավառութիւնը, այն համոզմունքը հայրենիքի փրկութեան համար, որով Տէրեանը հայոց վերածնութեան խորհուրդը պայմանաւորում է երկու գործօնով.

1. Իրենում հայկական ազգային զգացմունքների արթնացմամբ, ինչին իր կենսափորձի շնորհիւ հասնում է քնարական հերոսը.

2. Խորհրդապաշտական գիտակցութեան ու գեղագիտութեան մէջ մարդու կամ ազգի կործանման ու վերածնութեան գաղափարով։

Ուստի բանաստեղծը կարող է ասել հաստատակամ և ***մարգարէաբար.***

Որպէս փիւնիկ՝ կրակից կ'ելնես նոր

Գեղեցկութեամբ ու փառքով վառ ու լուսաւոր:

Արիացի՛ր, սի՛րտ իմ, <u>եվ հաւատով տոկուն,</u>

Կանգնի՛ր հպարտ որպէս լոյս լեռն է մեր կանգուն */298/:*

Լեռը որպէս Հայոց յաւերժութեան խորհրդանիշ փաստում է, որ իր գոյութեան մէջ պարփակուած է մեր ազգի գոյութեան ու անմահութեան երաշխիքը։ Եւ հակառակ տրամաբանութեան բոլոր օրէնքների ու նաեւ շնորհիւ տէրեանական համոզմունքի ոյժի մենք կանք և պիտի լինենք։

---

[35] **Զարեան Կ.,** Երկեր, Ե., Սովետական գրող, 1985, էջ 181-182:

[36] Նոյն տեղում, էջ 14-20:

[37] Դիցաբանական բառարան, Ե., 1985 էջ 159-160:

Բ.Գ.Դ. Ս. ՄԽԻԹԱՐԵԱՆ

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՎԵՐԱԾՆՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ ՎԱՀԱՆ ՏԷՐԵԱՆԻ «ՄԻ՛ ԽԱՌՆԷՔ ՄԵԶ ՁԵՐ ՎԱՅՐԻ, ԱՐՋԻ ՑԵՂԵՐԻՆ» ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Ամփոփում

Այս յայտնի գլուխգործոցը Վահան Տէրեանի «Երկիր Նաիրի» բանաստեղծութիւնների ժողովածուի վերջին ստեղծագործութիւնն է, որի հիմնական թեման 1915 թուականի Հայոց ցեղասպանութիւնն է։ Այն առանձնանում է իր խիստ հայրենասիրական ոգով, միեւնոյն ժամանակ ըմբոստութեամբ և լիայուսութեամբ։ Մեծ բանաստեղծը ցանկացել է ցոյց տալ, որ ցեղասպանութիւնը չի կարող կոտրել իր հաւատը, և որ հայ ժողովուրդը կը վերածնուի փիւնիկի նման և կը յաղթահարի դարերը՝ ինչպէս սրբազան Արարատ լեռը։ Տէրեանն աւելացնում է, որ ասորիները և բաբելոնացիները, թուրքերը եւս, ինչպէս հայ ժողովորդի դաժան թշնամիներ՝ կը կորչեն պատմութեան թատերաբեմից։

D.P.S. S. MKHITARYAN

THE THEME OF FATHERLAND IN VAHAN TERYAN'S POEM "DO NOT CONFUSE US WITH YOUR WILD, BEAR TRIBES"

Summary

This well-known masterpiece is the last one in VahanTeryan's collection of poems entitled "The Land of Nairi", the main theme of which is the Armenian Genocide of 1915. It is characterized by strong patriotic spirit, senses of fury and hopefulness at the same time. The great poet wants to show that the genocide cannot break his faith; that Armenian people will be reborn like a phoenix and will livethrough centuries like their sacred mountain Ararat. Teryan adds that like the cruel enemies of the Armenian people, Assyria and Babylon, Turkey will similarly-disappear from the arena of history.